

Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն՝

Լ. Գևորգյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ, ՔՈՒՉԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ և ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ուստարի

**Մեթոդաբանական նիստերը նախատեսել յուրաքանչյուր կիսամյակում երեք նիստ**

# Մեթոդական միավորման խնդիրներն ու նպատակները

1. Ուսումնասիրել և ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական որակների բարձրացմանը նպաստելու համար:
2. Մեթոդական միավորման բնագավառի առարկաները դասավանդելիս կարևորել ուսուցման բովանդակության գործնական կիրառական ուղղվածությունը :
3. Մաթեմատիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի դասերը դարձնել աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացման միջոց՝ օգտվելով ժամանակակից մեթոդներից:
4. Կրթական գործընթացը չափորոշչային պահանջներին առավելագույնս համապատասխանելու նպատակով առաջնահերթ խնդիր է համարվում մաթեմատիկայի , ֆիզիկայի, ինֆորմատիկայի հանրակրթական նշանակության բացահայտումը, մաթեմատիկայի , ֆիզիկայի, և ինֆորմատիկայի ուսուցման պարտադիր մակարդակի ապահովումը : Դրան էապես նպաստող գործոն համարել դասավանդման նոր մեթոդների կիրառումը նոր տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում :
5. Անցկացնել ընթերցումներ մանկավարժների մեթոդական վարպետության բարձրացման ուղղությամբ :
6. Կազմակերպել առարկայական մրցույթ – վիկտորինաներ , բազմաբնույթ միջոցառումներ,

առարկայական միջոցառումներ , օլիմպիադաներ, ակտիվ մասնակցություն ցուցաբերել << Կենգուրու >> , << Ոգնի >> մրցույթներին :

7. Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել.

ա) դաստիարակելու ազգային ու համամարդկային արժեքներ կրող , ակտիվ անձ և քաղաքացի ,

բ) բացահայտելու աշակերտների անձնային որակները և ապահովելու դասապրոցեսին մասնակցությունը,

գ) ամրապնդելու հարգանք և հպարտություն հայրենիքի, բնության հանդեպ,

դ) օգնել աշակերտներին կողմնորոշվելու հասարակական բազմաբնույթ հարաբերություններում՝ տալով բնական գիտելիքների անհրաժեշտ պաշար :

## Դասալսումներ և բաց դասեր

№	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Կատարող	Նշումներ
1.	<p><b>Անհատական դասալսումներ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. մաթեմատիկայի դասեր 5-6 -րդ դասարաններում</li> <li>2. հանրահաշվի դասեր 7-12-րդ դասարաններում</li> <li>3. երկրաչափության դասեր 10-12-րդ դասարաններում</li> <li>4. նպատակային դասալսումներ 5-12-րդ դասարաններում</li> <li>5. դասեր՝ սկսնակ ուսուցիչների մոտ</li> <li>6. դասալսումներ՝ կապված նոր դասագրքերի, դասավանդման մեթոդների կիրառման հետ</li> <li>7. դասալսումներ՝ դասընթացի կատարելագործման նոր չափորոշիչների հիմքով</li> <li>8. դասալսումներ փորձառու և բարձրորակ գիտելիքներ ապահովող ուսուցիչների մոտ</li> <li>9. դասալսումներ 5-9-րդ դասարաններում՝ նոր մեթոդներով աշխատանքը ստուգելու համար</li> <li>10. փոխադարձ դասալսումներ /համապատասխան գրանցումներով</li> <li>11. բոլոր դասալսումների քննարկումներ մեթոդափոխման անդամների /և տնօրինության/ կողմից:</li> </ol>	<p>տարվա ընթացքում</p>	<p>տնօրեն, փոխտնօրեն, մեթոդափոխման նախագահ, մ/մ ուսուցիչներ</p>	

<p>2.</p>	<p><b>Խմբային դասախոսումներ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կոնկրետ դասեր մաթեմատիկայից, ֆիզիկայից</li> <li>2. Կոնկրետ ուսուցչի մոտ որևէ առարկայի դասը</li> <li>3. դասախոսումներ՝ դասավանդման արդյունավետությունը ստուգելու նպատակով</li> </ol>			
<p>3.</p>	<p><b>Օրինակելի կամ ցուցադրական բաց դասերի կազմակերպում.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. օրինակելի դասեր փորձառու ուսուցիչների մոտ</li> <li>2. բաց դասեր</li> </ol>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>մեթոդիավորման նախագահ, անդամներ</p>	

## Մեթոդամանկավարժական աշխատանքների քննարկումներ

№	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Կատարող	Նշումներ
1	Մաթեմատիկային, ֆիզիկային վերաբերող նոր գրքերի, պարբերականների և առանձին հոդվածների քննարկում: Համացանցի տարբեր կայքերի նյութերի ուսումնասիրություն:	Սեպտեմբեր	Մեթոդիավորման նախագահ, անդամներ	
2	Համապատասխան առարկաներին վերաբերող մեթոդական հարցերը /<<Տեղեկագիր>>/ , մեթոդական նամակները:	Սեպտեմբեր	Մեթոդիավորման նախագահ, անդ.	
3	Անհատական խորհրդատվություն մաթեմատիկայի ֆիզիկայի, ինֆորմատիկայի դասավանդման խնդիրների վերաբերյալ:	Տարվա ընթացքում	Փորձառու ուսուցիչներ	
4	Ուսուցչի էթիկան:	Տարվա ընթացքում	Մ/մ նախագահ, անդամներ	
5	Դասավանդման նոր մեթոդների քննարկում և կիրառում:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման անդամներ	
6	Մեթոդական նոր ձեռնարկների կիրառությունը ուսուցման գործընթացում:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման անդամներ	
7	Սովորողների հետ անհատական աշխատանքի կազմակերպում, անհատական աշխատանքի ձևերի ընտրություն:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման անդամներ	
8	Աշխատանք շնորհալի երեխաների բացահայտման և նրանց ունակությունների զարգացման ուղղությամբ:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման անդամներ	

## Ուսումնասիրություններ

№	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Կատարող	Նշումներ
1	Գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների և հմտությունների ապահովումը մաթեմատիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի դասերին 5-9-րդ դասարաններում:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման նախագահ, անդամներ	
2	Մաթեմատիկայի, ֆիզիկայի դասավանդման դրվածքը 5-9 -րդ դասարաններում՝ աշակերտների գիտելիքների և ուսուցիչների դասավանդման մակարդակի ստուգման նպատակով:	Հոկտեմբեր, նոյեմբեր	Տնօրինություն, Մեթոդիավորման նախագահ	
3	Տրամաբանության զարգացումը 5-9-րդ դասարաններում:	Տարվա ընթացքում	Մ/մ անդամներ	
4	Կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքների համապատասխանությունը փաստացի գիտելիքին:	Դեկտեմբեր Մայիս	Մեթոդիավորման նախագահ, անդամներ	
5	Աշխատանքային փորձի ուսումնասիրություն. 1. Smart ծրագրով դասավանդման փորձի ուսումնասիրում և տարածում:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման նախագահ, անդամներ	



## Ստուգումներ

№	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Կատարող	Նշումներ
1	Կիսամյակային ամփոփիչ առաջին գրավոր աշխատանքի կազմակերպում և անցկացում:	Առաջին կիսամյակ	Մեթոդիավորման նախագահ	
2	Արդյունքների ամփոփում և քննարկում:	Առաջին կիսամյակ	Մ/մ նախագահ, անդամներ	
3	Կիսամյակային ամփոփիչ երկրորդ գրավոր աշխատանքի կազմակերպում և անցկացում:	Երկրորդ կիսամյակ	Մեթոդիավորման նախագահ	
4	Արդյունքների ամփոփում և քննարկում:	Երկրորդ կիսամյակ	Մ/մ նախագահ, անդամներ	
5	Թեմատիկ, ուսուցանող գրավորների տուգումներ:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման նախագահ	
6	Մատենավարության ստուգում:	Տարվա ընթացքում	Մեթոդիավորման նախագահ, փոխտնօրեն	
7	Ծրագրի կատարողականի ստուգում:	Յուրաքանչյուր ամիս	Մեթոդիավորման նախագահ	
8	Մատյանի գրանցումների և թեմատիկ պլանի համապատասխանության ստուգում:	Յուրաքանչյուր ամիս	Մեթոդիավորման նախագահ	
9	Օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացում:	Դեկտեմբեր	Մեթոդիավորման նախագահ, անդամներ	